

Որակավորման մրցաշարի կանոնակարգին և խաղերի չափորոշիչներին կարող եք ծանոթանալ անցնելով ստորև՝

Որակավորման մրցաշարի խաղի չափորոշիչներ՝

- Խաղը՝ Pro Evolution Soccer 2021 SEASON UPDATE:
- Խաղային համակարգիչ՝ SONY PlayStation 4:
- Թիմը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ
- Խաղային ժամանակահատված՝ 10ր
- Խաղային բարդություն՝ Սուպերաստղ
- Լրացուցիչ ժամանակ՝ այո
- 11 մետրանոցներ՝ այո
- Վնասվածքներ՝ ոչ
- Փոփոխություններ՝ 3 (+1 լրացուցիչ ժամանակում)
- Եղանակ՝ ամառ / պարզ
- Օրվա հատված՝ ցերեկ
- Տեսախցիկ՝ անհատական
- Գնդակ՝ REGISTA
- Սեղմանների կարգավորում՝ անհատական
- Խաղի արագություն՝ 0

Մրցաշարի անցկացման կանոններ

- Խաղերի հետաձգումը արգելված է
- Խաղի մեկնարկից 15 րոպեից ավել ուշանալու դեպքում խաղացողին գրանցվում է տեխնիկական պարտություն:
- Որակավորման մրցաշարերի ժամանակ մասնակիցները պետք է eEURO2021.com կայքում խաղի էջում (հասանելի կլինի մրցաշարի մեկնարկից հետո «My matches» բաժնում) գրանցեն անցկացրած խաղերի արդյունքները:
- Հանդիպման ավարտից հետո մասնակիցները պարտավորեն լուսանկարել հանդիպման հաշիվը և լուսանկարները վերբեռնել մրցաշարի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:
- Խնդիրների և միջադեպերի առաջացման դեպքում մասնակիցները պետք է բողոք բացեն մրցաշարի պաշտոնական կայքում, (<https://www.eeuro2021.com/protest/add>) որի հիման վրա էլ առաջնության կազմակերպիչները կայացնելու են վերջնակ որոշումը:
- Եթե խաղի ընթացքում մինչև խաղի ավարտը տեղի է ունենում կապի ընդհատում, ապա խացադրոլները պետք է դրա մասին տեղյակ պահեն առաջնության կազմակերպիչներին և հանդիպումը պետք վերսկսվի: Օրինակ՝ եթե կապի ընդհատումը տեղի է ունենում հանդիպման 65-րդ րոպեին, ապա վերսկսված հանդիպումը պետք է ընթանա մինչև հանդիպման 25-րդ րոպեն: Հանդիպման վերջնարդյունքը կլինի 2 խաղերի(65 րոպե + 25 րոպե)

հանրագումարը: Եթե 2 խաղերի հանրագումարում ոչ-ոքի է գրանցվում, ապա հանդիպումը պետք է շարունակել մինչև առաջին գոլը՝ ոսկե գնդակի սկզբունքով: Եթե ընդհատված հանդիպման ժամանակ խաղացողներից մեկը կարմիր քարտ է ստացել, ապա հանդիպման վերսկսումից հետո այդ խաղացողը պետք է կրկին կարմիր քարտ ստանա: Այդ դեպքում խաղի ժամանակը կհաշվի կարմիր քարտ ստանալու պահից:

- Մեկ խաղացողի պատճառով 2-րդ անգամ կապի ընդհատման դեպքում, տվյալ խաղացողին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-3 հաշվով:

Մրցաշարի անցկացման ամբողջական կանոնակարգին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ [հղումով](#):